

## Ի Է

### ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ՀԱՅԵՐ ԵՒՅԻՄԻՈՍԻ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

#### 1. Ո՞վ էր Եւթիմիոս .

Մեր նախընթաց տողերու մէջ հարեւոնցի կերպով գրած էինք Մելիտինացի Եւթիմիոսի մասին . այս անգամ կը փափաքինք պատմական տեղեկութիւններ տալ այն հայերու մասին որ կ'ապրէին Երուսաղէմի մօտ գտնուած Եւթիմիոսի վանքին մէջ : Բայց նախ քան զայս պէտք է գիտնալ Եւթիմիոսի ինքնութիւնը ու անոր հիմնարկած վանքին պատմութիւնը : Մանրամասնութիւնները զանց պիտի ընենք , կիւրեղ Սկիւթուպոլսեցին արդէն գրի առած է զանոնք :

Մեծն Եւթիմիոս՝ այդ հայազգի և ազնուական անապատականը 377 ին ծնած է Մելիտինէի մէջ . հայազգի և ազնուական ըսինք , վասնզի անոր հայրը Պօղոս և մայրը Դենիս Մելիտինէի ամենէն նշանաւոր և ազնուական շառուիղներէն ըլլալով՝ բիւզանդական կայսրութեան մէջ կը վայելէին բարձրագոյն դիրք մը . Մելիտինէի հայ ազնուականութիւնը ծագամբ շատ հին էր , և կը նկատուէր հայ նախարարութիւններէն մին , Մելիտեանք կամ Մելիտիեանք անուամբ , որոնք կը յիշուին Հայաստանի բեեռագիր արձանագրութեանց մէջ , ինչպէս նկարագրեցինք , երբ Մելիտինացի Պողիկտոս Հայկազն վկային վրայ գրեցինք (էջ 132) : Մելիտինէի ազնուականութիւնը զաղթած էր Հայաստանէն . Եւթիմիոսի ընտանիքը կը վերաբերէր մեծ հաւանականութեամբ նոյն հայ ազնուականութեան . մենք թէև չունինք ի ձեռին որոշ յիշատակարան մը այս պարագան հաստատող , բայց նկատի առնելով անոր կենսագիրին տողերը , որով շարունակ կը շեշտէ անոր և ծնողացը մեծ ազնուականութիւնը : Դարձեալ նոյն ազնուականութենէն կը սերէին հայազգի Սիդոնիոս՝ Եւթիմիոսի ուսուցիչը , և անոր երեք եղբորդիները՝ որոնք յետոյ պիտի գային Երուսաղէմ , Եւթիմիոսի իրենց ազգակցին մօտ , և պիտի գրաւէին նշանաւոր